ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ԳՀԾՁԲ-18/15 – 130 – 2018

ք. Երևան «22» 05 2018թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյանի, որը գործում է որը գործում է նախարարության կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դաշա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ի. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Տարեցների Հանրապետական խաղերի» անցկացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1269000 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

[1] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն Ք.Երևան Արովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 90001109073 ՀՎՀՀ 02586282	«Դաշա» ՍՊԸ ք. Երևան, Գուլակյան փող. 28 «Ինեկոբանկ»ԲԲԸ Հ/Հ 20506220665600 ՀՎՀՀ 00138727
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան	Տնօրեն Հ. Ճակոբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված N 1
„22" 05 20 թ. կնքված
ՍՊ-ԳՀԾՁԲ-18/15 – 130-2018 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	92621110/1		դրամ	1269000	1	ՀՀ 10 մարզկենտրոններ, ք. Երևան և Մտեփանակերտ ք. Ծաղկաձոր	3-րդ եռամսյակ (10.08.2018-01.10.2018) Մարզային փուլը 2018թ. օգոստոսի 10-ից 20-ը Հանրապետական փուլը 2018 թ. Սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ՝

«Տարեցների հանրապետական խաղերի անցկացում» ծրագրի շրջանակներում 2018 թվականի մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերում՝

Տարեցների հանրապետական խաղերի ծրագրի նպատակն է՝ տարեց բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, տեղերում բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում:

Տարեցների հանրապետական խաղերի ծառայությունը մատուցվում է երկու փուլերով՝ **մարզային** և **հանրապետական**:

Մարզային փուլը անցկացվելու է 2018 թվականի օգոստոսի 10-ից 20-ը, ՀՀ 10 մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում:

ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում խաղերը կազմակերպելու և անցկացնելու համար մասնակիցը պարտավոր է նախատեսնված վկայագրերը (հավաստագրերը) հասցնել ՀՀ մարզկենտրոններ օգոստոսի 10-20-ը ընկած ժամանակահատվածում (համաձայն ՄՍՖԴՀ վարչության կողմից ներկայացված ժամանակացույցի) և տեղերում կազմակերպել մրցանակակիրների պարգևատրման արարողությունը:

Տարեցների հանրապետական խաղերի **հանրապետական փուլը** կազմակերպվելու և անցկացվելու է 2018 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը, Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում: Մասնակիցը պարտավոր է որևե մարզահամալիրում ապահովել շախմատ, շաշկի, նարդի և դարթս մարզաձևերի մրցումների կազմակերպման համար համապատասխան մարզասրահներ, կահավորել համապատասխան մարզագույքով՝ շախմատի 12 և շաշկու 6 լրակազմով, նարդիներով 12 հատ և դարթսով 3 հատ, կազմակերպել բժշկական օգնության և սպասարկման շուրջօրյա ծառայություն (3 օր):

Մասնակիցը Խաղերի փակման հանդիսավոր արարողությունը կազմակերպելու, մրցանակակիրների պարգևատրությունը կազմակերպելու համար պետք է հոկտեմբերի 1-ին տրամադրի մարզադահլիճ ձևավորված ՀՀ դրոշներով, մրցման խորհրդանիշ պաստառներով, (տեքստը և արտաքին տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՀ վարչության հետ), միաժամանակ պարտավոր է ապահովել համապատասխան հաղորդավարի ծառայություն, ռադիո տեխնիկա-բարձրախոսներով, պատվանդան մրցումների ավարտից հետո մրցանակակիրների պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար:

Խաղերի հանրապետական փուլին կմասնակցեն ՀՀ 10 մարզերի, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության հավաքական թիմերը, թվով 132 մարզիկ-մարզուհի և 12 ներկայացուցիչ:

Խաղերի մարզային և հանրապետական փուլերի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալ մարգագույքը և պարագաները՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզերին պարգևատրելու համար

Վկայագրեր (հավաստագրեր, շնորհակալագիր)՝ խտությունը՝ 220-260 գ/բմ, չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ: Հավաստագրերի տեսքը և տեքստերը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ, կից ներկայացվում է նաև հավաստագրի ձևը: **325 հատ**

Մարզային փուլի համար՝ 24 հատ x 12 մարզ = 288 հատ
Հանրապետական փուլի համար՝ 37 հատ.

Հուշանվեր (գավաթներ) 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերի 3 հատ.
1-ին տեղ՝ 65 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով **1 հատ**
2-րդ տեղ՝ 60 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով **1 հատ**
3-րդ տեղ՝ 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով **1 հատ**
Յուրաքանչյուր գավաթի պատվանդանի վրա գրվում է՝ ՀՀ տարեցների հանրապետական խաղեր և համապատասխան զբաղեցրած տեղը:

Հանրապետական խաղերի կազմակերպման համար, անհրաժեշտ է հետևյալ մարգագույքը: Մարգագույքի որակը և տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝ մրցումներից 3 օր առաջ.

- **Շաշկի՝** 12 լրակազմ.
- **Շախմատ՝** 6 լրակազմ.
- **Դարթս՝** 3 հատ.
- **Նարդի՝** 12 լրակազմ.
- Մրցավարների համար մայկա՝ 12 հատ.
- Մրցավարների համար գլխարկ՝ 12 հատ.
- **Հուշանվեր՝** 2 հատ.

- **Շաշկի՝** պատրաստված փայտյա կամ պլաստմասսե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան:
Փայտյա կամ պլաստմասսե հումքից շաշկու կլոր քարեր, 2 գույնի, 12-ական հատ:
Մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան.

- **Շախմատ՝** պատրաստված փայտյա կամ պլաստմասսե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան: Փայտյա կամ պլաստմասսե հումքից շախմատի քարեր, 2 գույնի (16-ական հատ), մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան,

- **Դարթս՝** պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից.

- **Նարդի՝** պատրաստված փայտից մրցումային ստանդարտներին համապատասխան: (Փայտյա կամ պլաստմասսե քարեր 2 գույնի 30 հատ, 1 զույգ զառեր),

- **Մրցավարներին՝ շապիկ և գլխարկ՝** բամբակյա, կլոր վզով, կիսաթև, ուսից մինչև թևքի եզրը ձգվող գոլերով և ամառային գլխարկ, (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով): Տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ.

- **Հուշանվեր՝** օրգանական ապակուց պատրաստված հանրապետական փուլի մրցումներին ամենատարեց մասնակիցներին (1 տղամարդ, 1 կին), հանձնելու համար: Միջոցառման անվանումով, նախարարության լոգոյով, արծիվի տեսքով քանդակված: Չափսը՝ 30 սմ լայնությամբ, 1 սմ հաստությամբ, 35 սմ բարձրությամբ, պատվանդանով:

Տեսքը, սեսքը և չափերը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:

Մարզական խաղերի ժամանակ մրցավարական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ գրենական պարագաները.

-Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297մմ) ձևաչափի թերթերի համար, **5 հատ**

-Ժապավեն-կպչուն պոլիեթիլային ժապավեն (սկոչ) 48 մմ x 100 մ չափսի: **1 հատ**

-Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ, գլան-փաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, **5 հատ**

-Հաշվիչ (կալկուլյատոր) «CITIZEN» կամ համարժեք: **1 հատ**

-Թուղթ A4 չափսի1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված 80 գ/մ² (210 x 297) մմ, **3 հատ**

-Ծրար A5 ձևաչափի: Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար՝ սահմանված չափի և ձևի: **50 հատ**

- Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի, **10 հատ**

-Գելային-գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել) **2 հատ**

-Գրիչ գնդիկավոր. Տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափսերի, **10 հատ**

-Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ, **12 հատ**

Յուրաքանչյուր գավաթի պատվանդանի վրա գրվում է՝ «ՀՀ գյուղական մարզական խաղեր» և նշվում զբաղեցրած տեղը: Տեքստը պետք է համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:

**Վերոհիշյալ խաղերը անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2018 թ. մարտի 20-ի N 49 Ա/1 հրամանով հաստատված 2018 թվականի «Տարեցների հանրապետական խաղեր» մրցույթի կանոնակարգի պահանջների համաձայն:*

*** Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը.*

****Մասնակիցը մարզական խաղերի անցկացման և պարգևատրման արարողության կազմակերպման համար մարզադահլիճում կատարվող աշխատանքները պետք է համաձայնեցի ՄՍՖԴՔ վարչության հետ:*

*****Բոլոր աշխատանքները համաձայնեցնել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:*

******Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական և դահլիճի ձևավորման աշխատանքներ:*

*******Կատարողը մարզային փուլի հավաստագրերը և հանրապետական փուլի համարժանհրաժեշտ մարզագույքը, նվերները հասցնում է մրցավայր՝ կազմելով մարզագույքի բաշխման ցուցակներ, որոնք հետագայում ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասն են կազմում:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն Ք.Երևան Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011059053 ՀՎՀՀ 02586282	«Դաշա» ՍՊԸ ք. Երևան, Գուլակյան փող. 28 «Ինեկոբանկ»ՓԲԸ Հ/Հ 205062206656 ՀՎՀՀ 00138727
Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան (ստորագրություն)	Տնօրեն Դ. Զաքարյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«22» 05 20 թ. կնքված
ՍՊ-ԳՀՇՁԲ-18/15 - 130 գրավոր պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110	Սպորտային միջոցառումների կազմակերպման Ծառայություններ / « Տարեցների Հանրապետական խաղերի անցկացում»/							1269.0	1269.0	1269.0	1269.0	1269.0	1269.0	1269.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարություն
Ք.Երևան Արովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 90001105905
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Դաշա» ՍՊԸ
ք. Երևան, Գուլակյան փող. 28

«Ինեկորանկ»ՓԲԸ

Հ/Հ 205062206656
ՀՎՀՀ 00138727

Տնօրեն՝ Ի. Ասլանբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«02» 08 2018 թ. կնքված
ՄԴ-ԳՀԾՁԲ-18/15-130 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

____

____

գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ ____________________

Պատվիրատու

____

____

գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ ____________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «   » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   »   «   » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
„28" „05" 20 թ. կնքված
ՄԴ-ԳՀԾՁԲ 18/15-130 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստի ֆիքսման վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը / Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն